ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ 109

«14» հոկտեմբերի 2021 թվական **գյուղ Մայիսյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ /ՄԱՅԻՍՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐ/ ԳՏՆՎՈՂ <<Մ. ԻԳԻԹՅԱՆ>> ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.4 ՀԵԿՏԱՐ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ՝ 08-077-0215-0002) ՎԱՐԵԼԱՀՈՂԸ ՓՈԽԱԴՐԵԼ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին»» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1--ին մասի 31-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 8-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ և նույն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետերի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2021 թվականի օգոստոսի 6-ի թիվ 173 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում հողամասի նպատակային

նախատեսվում է՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի վարչական սահմաններում /Մայիսյան բնակավայր/ գտնվող <<Մ. ԻԳԻԹՅԱՆ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 08-077-0215-0002 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նպատակային նշանակության 0.4 հեկտար (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ 1279809, տրված 09.03.2005թ., հասցե՝ մարզ Շիրակ, Մարմաշեն համայնք, գյուղ Մայիսյան, Մայիսյան-Գյումրի խճուղի, 11-րդ հողամաս) նախատեսված վարելահողը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման գործառնական նշանակության, այդ հողամասում հեղուկ գազի լցակայան կառուցելու նպատակով և հողի նպատակային նշանակությանը համապատասխան թույլատրված հողօգտագործում ապահովելու համար:

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին՝

1) ապահովել սույն որոշումից բխող անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը,

2) հողամասի նպատակային նշանակության փոփոխության և հողերի ընթացիկ հաշվառման տվյալների հիման վրա համայնքի հողային հաշվեկշռում կատարել համապատասխան փոփոխություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Ձեռնպահ՝*
Մ. ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	----------	----------	----------
Գ. ՄԿՐՏՉՅԱՆ՝	----------	----------	----------
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	----------	----------	----------
Ա. ԶԱՔԱՐՅԱՆ՝	----------	----------	----------
Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ՝			

Ջ. ՂԱՖԱՐՅԱՆ՝ ---------- ---------- ----------

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

«14» հոկտեմբերի 2021 թվական

գյուղ Մայիսյան